

Տ. ԳԱՐՐԻԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

(Նամակ Կ. Պօլսից)

. . . Տէր Խմբագիր «Լուսայ» պատուական ամսագրոյ

Ինչպէս նախորդ նամակաւս խոստացել էի, այս անդամ կուգամ մի քանի դիտողութիւնը անել յարգելի բանասէր պր. Եր. Շահազիզի գրածի վերայ Տէր Գարրիէլ Պատկանեան աւագ քահանայի և մագիստրոսի մասին «Լուսայ»-ի ներկայ 1 և 2 համարների մէջ:

Զեմ կարդացած «Մշակ» լրագրի 1902 թուի 41. և 42 համարներում ինչ գրած է պ. Կարակաշ իւր պապի Տ. Գ. Պատկանեանցի ծննդեան հարիւրամեկի առթիւ. միայն պ. Ե. Շահազիզի գրածէն կիմանամ թէ կենսագրական այդ յօդուածի մէջ պ. Կարակաշ շատ հարեւանցի անցել է Պատկանեանցի վերայ եղած այն ժամը ամբաստանութեան մասին, որոց հետեանօք 27. երկար տարիներ դատապարտուած մնաց դժբաղդ ծերունին դադարիլ ի քահանայագործութենէ:

Ուստի այդ ամբաստանութեան վերայ պ. Ե. Շահազիզի լինը կը ձեռնարկէ գրել. տեղեկութիւններ «առնելով ականատեսների և գործող անձանց շատ մօտ և մտերիմ մարդկանց պատմածներից», և միւս կողմանէ յիշելով պ. Կարակաշի ադորհամար ունեցած լուութիւնը մինչև հնրատարակումն իւր պապի ինքնակենսագրութեան, բայց և զսոյն կասկածաւոր կը համարի թէ պիտի կարենայ պարզել ճշմարտութիւնը, և անկասկած պիտի լինի կ'ասէ, միակողմանի և ջատագովական մի բան:

Տ. Գարրիէլ Պատկանեանցն ամբաստանուած է թէ՝ երկու սրիկայ վարձած է սպանել տալու Ն. Նախիջևանի զօրեղ քաղաքագլուխ մեծահարուստ Յարութիւն Աղայ Խալիբեանցը, և այդ սրիկայից վարձքը վճարելու ժամանակ՝ Տ. Գարրիէլ բըռնուած է դարանակալ ուստիկանների ձեռամբ, և անմիջապէս բանտարկուած իբրև ոճրագործ՝ Նախիջևանի բանտում. և ապա

Ռուսակի, և յետոյ տարագիր և աքսորական եղած, զրկուելով
ի քահանայական տարագէ և յիշխանութենէ:

Խնչ որ այս մասին պ. Ե. Շահազիզ տեղեկացած և գրած
է, ինձ համար և թերևս շատերու համար կրնայ միակողմանի
համարուիի, բայց այն ատէն միզ պիտի տայ մեզ ստոյդ և ճշշ-
մարիտ տեղեկութիւն: Հստ իմ դատման, հարկ է ուշի ուշով
նկատողութեան առնուլ խնդրոյն բոլոր պարագաներն, և
թշնամական կերպարանք ստանալուն հանգամանքներն և ըստ
այնմ բիչ շատ համոզում գոյացունել:

Մի կողմը կայ զօրեղ և ճարպիկ մեծատուն և մեծահա-
րուստ մարդ, որ իւր ճանկերի մէջ առած է քաղաքի Մա-
գիստրաթը իւր սարօթ, և զպէտու, և զկուսակալս, և որ մեծն
է հոգնորական բարձր իշխանութեան գլուխն Ամենայն Հայոց
Հայրապետն Տ. Ներսէս Ե. որ հզօրագոյն պաշտպան եղած է Խա-
լիքեանի-ի կործանումն Տ. Գաբրիէլ Պատկանեանի, որ թէպէտ
ի տղայ տիոց ծանօթ և բարեկամ Պատկանեան տան և ծնողին
Տ. Գաբրիէլի՝ բանաստեղծ Սերոբէ վարժապետին, և նոյն իսկ
ձեռնադրող Տ. Գաբրիէլի, բայց սակայն միշտ հալածող նմին
եղած, և այդ իսկ պատճառաւ քահանայացուցած...

Թէ ի՞նչ պատճառ և շարժառիթ կար Տ. Գաբրիէլի հա-
լածուելուն, չաշչարուելուն, և քաղաքէ ի քաղաք տեղափոխե-
լուն, և իւր ընտանեօք թշուառութեան մատնուելուն, ասոնք
ամենը յոյժ մանրամասնօրէն գրուած է Տ. Գաբրիէլի ինքնա-
կենսագրութեան մէջ բոլոր պարագայիւք, և անուններով բա-
ցատրուած, որ զարմանք և հիացում կը պատճառէ ընթերցո-
ղին, որոյ վերայ ես ևս պ. Կարակաշեանի նման պիտի լուս,
ցանկալով որ ապագայն ևս լուսութիւն պահէր այս առիւծի մե-
նամարտութեան վերայ...

Ուստի ուրոյն ծալեալ և ի մի կողմ եղեալ այդ ամենը,
կը բաւականանամ յառաջ բերել սպանութեան սոնկալի ամբաս-
տանութեան վերայ Տ. Գաբրիէլի տուած բացատրութիւնն
միայն, քաղելով իւր համառօտ ինքնակենսագրութենէն, զոր
յատկապէս իս անունով և ինձ համար գրած է դժբաղդ ծերու-
նին 1876 թուի յունուարի 29-ին. որ նամակի թղթի մեծու-
թեամբ 40 երես մանրագիր տեղեկագիր մի է՝ յոյժ հետաքըր-
քրական պարունակութեամբ:

Տ. Ներսէս Ե. կաթողիկոսի ոխերիմ վարմունքը, և Սար-
գիս վարդապետ Զալալեանի յոխորա քինախնդրութիւնը, և
Խալիքեան մեծագանձ իշխանի խարդախ ընթացքն այն
աստիճան կը հալածեն և կը նեղեն Պատկանեան, որ ճա-

բահատեալ, կը հարկադրի ընդարձակ բողոքագիր մի պատրաստել յանուն կաթողիկոսի, և զայդ ռուսերէնի թարգմանելով մատուցանել Կայսերին Կառավարութեան, որոյ մէջ անշուշտ պիտի գրուած լինէր և Խալիբեանի դէմ եղած Նախիջևանի եկեղեցեաց հաշուական խնդիրն, որ սկսել էր ժողովրդական առուլիսի տեղի տալ:

Տ. Գաբրիել Պատկանեան մտադիր կը լինի այդ ռուսերէն բողոքագիրն, այնպիսի փաստաբանի մի գրել տալ, որ Տէրութեան օրինաց և կանոնաց համաձայն լինի, ուստի կը պարտաւորի այնպիսի մէկը որոնել ու անոր յանձնել դորա խմբագրութիւնն:

Ահաւասիկ, թէ թնչպէս կը պատմէ զայդ:

«Ոչ համարձակեալ յանձնապաստան վստահութեամբ յենուլ ի կարողութիւն անձին, զիետ եղէ գտանել զբաջ փաստաբան, որ մարթացի բացաբել զհանգամանս իրացն այնպէս, որպէս արժան է, զի յերեան ելցէ վշտացեալ անմեղութիւն իմ: Եւ ահա ի յայտ եկն և փաստաբանն այն՝ զոր խընդրէի: Ոչ բազմօք յառաջ քան զաւուրս զայսոսիկ եկեալ էր ի մերձակայս Նախիջևանայ ի Խոստով քաղաք, փաստաբան ովն Թարչէւսքի մականուանեալ, որոյ շարադրութիւնք և եղանակը գրուածոց ինձ հաճոյ գտան, և ցանկացայ տալ նմա յօրինել զիմ բողոքագիրն. այլ յորժամ գնացի առ նա՝ գտի զնոսա արդէն զինեալ և վառեալ հակառակ իմ: Զ՞ն ոչ մոլորեցուցանէ արծաթ ծառայեցուցիչ: Զ՞ն ոչ մարթանայ յինքն յանկուցանել կաշու:

«Երկու հայազգի երիտասարդք անգործք, որք կամէին մտանել գտանել խորշիկ ընդ թեատակաւ Խալիբեանի, և զորոց ես ինքն էի միջնորդեալ առ Խալիբեանն ընդունի զնոսա ի խնամս իւր և տալ նոցա ճանապարհ ապրուստի. և նա խոստացեալ էր, բայց չև էր կատարեալ, Թէվզեան և Խսմայէլցեան, մտերիմ բարեկամք իրերաց, մերոց աւուրց Ովրէստէս և Պելազէս Նախիջևանայ, որք և մերձաւոր բարեկամք էին Թարչէւսքոյ, ինձ երևեցաւ կաշառատուքն, որոց ձեռամբ հակառակորդքն իմ զըրաւեալ ունէին զսիրտ Թարչէւսքոյ: Թէվզեանն էր խոստովանորդի տէր Թարչէկլի Տէր-Սիմօնեան, որ յորժամ կայր փախստական յէջմիածին, և պահէր ընդ Թէվզեանի զանընդհատ նամակակցութիւն սիրոյ բարեկամութեան. իսկ Խսմայէլցեանն թէպէտ և էր իմ խոստովանորդի, և ես էի զըոյր նորա ի մեծի նեղութեան իւրեանց պսակեալ, որպէս և զնա ինքն ևս զիսմայէլեանցն փրկեալ էի ի նմանօրինակ նեղութենէ, սա-

իայն քեռայր նորա երիտասարդն կէօքչայեան գոլով ի մի սպասաւորաց Խուլգուուուխեանի, թէպէտ և քաջ գիտէի զի և է մի ի գործեաց Հոփսիմէի Խուլգուուխեանի, այրի դստեր Խալիբեանի, սակայն ոչ կասկածէի զդարանակալութենէ իմեքէ, յետ այսքան բարիս առնելոյ տնանկացեալ գերդաստանին այնմիկ՝ առանց ունելոյ զակնկալութիւն միոյ բնիոնի անգամ:

«Յորժամ Քարչէւսքին հրաժարեցաւ ի յօրինելոյ զիմ բողքագիր, և ես եղի ի միտս երթալ ի մերձակայ քաղաքն Բահմութ, ուր կայր քաջածանօթ օրէնսգէտ ոմն Բորիսովէքրաքի կոչեցեալ, որ և պարտապան իմ էր, Խսմայէլցեանց որպէտ երախտապարտ բազմօթ, որովհետեւ քաջ գիտէր, զի թէ զերծայց ի տրամառիթ հանգամանաց անտի՝ ինքն ևս ոչ մնացէ անգործ, զի ես ընդ փոյթ գտից վասն նորա գործ արժանաւոր և արդիւնաւոր, եկաց յանդիման իմ իբրու ի թիկոնս ինձ արագեալ. և յանձն էտ օգնել ինձ ի համոզելն զՔարչէւսքին, զի շարադրեցէ զրողոքագիրն իս, վասն որոյ և առեալ յինչն զթուղթս իմ զամենայն, զորս ժողովեալ էի այնքան տաժանմամբ, և որք բաղկացուցանէին փաթեթ մի մեծ, որ կշուր լըտերկ վեց, և զկառ իմ, տարաւ առ Քարչէւսքին՝ որ յայնժամ ի Ռոստովէ գնացեալ էր զործովք փաստաբանութեան՝ ի նոր Զէրքասք քաղաք Դոնաւիսեան կօզակաց:

«Քարչէւսքին ըստ պատմելոյ Խսմայէլցեանի և կառավարչին իմոյ, յորժամ ծայրէ ի ծայր ընթերցեալ է զայն թուղթս, ասացեալ է. «Եթէ գործն հասանիցէ անդր՝ ուր ուղիեալ է, այսինքն յատեան Տէրութեան, թուղթքս այսոքիկ ոչ միայն սասանեցուցեն զԱթոռն Հայրապետական, և շարժեսցմն զնատեալըն ի վերայ նորա ի տեղւողէն՝ յորում արդէն արգելեալ է օրնենել զՄիւլոն և ձեռնազրել զեպիսկոպոսունս վասն իրացն Թաւրիզգի Հայոց, այլ և կենդանւոյն սպանցեն զԽալիբեանն»:

Ահա այս էր, որ ետ նոցա գաղափար յարմարել և ասել, թէ Տէր Գարբիէլն Պատկանեան կամելով սպանանել զԽալիբեանն՝ վարձէր զսրիկայս:

Խսմայէլցեանն յետ քանի աւուրց՝ դարձաւ կառօք իմովք ի նոր Զէրքասքէ, և դարձոյց առ իս զթուղթս իմ ամբողջ, և զկնի հաղորդելոյ ինձ զրանս Քարչէւսքւոյ յաւել, թէ՝ միջնորդութեամբ իմով և աղաշանօք թէվզեանի՝ Քարչէւսքին որ նախ պահանջեաց հազար ոռուբլի, յետոյ զիջեալ ի թախանձանս մեր յանձն էտ գրել զբողոքն հարիւր յիսուն արծաթով, զոր եթէ յանձն առնուցուս հատուցանել, ունի ի դարձի իւրում ի Ռոս-

տով յաւուրս յայսոսիկ՝ մեկուսանալ ի տուն քո, գրել զթուղթն առաջի աշաց քոց, զի բազում ինչ մնան ի մանրամասնութեանց բացատրելիք, զոր ոչ ոք բաց ի քէն կարէ առնել:

«Եւ որովհեակ բողոքն այն եթէ գրէր արդարէ այնպէս, որպէս եսն կամէի և լինելոց իսկ էր ընդ վերակացութեամբ իմով, արժէր հիսկ հազար, վասնորոյ և ես յօժարեցայ հատուցանել զհարիւր յիսուն, եղեալի մտի յաւելուլ ի նոյն և հարիւր մի՛ յորժամ ամենայն գաղափարք իմ այնպէս ի լոյս ընծայեսցին՝ որպէս եսն կամէի:

Յետ քանի աւուրց իսմայէլցեանն երեր նամակ առ իս գըրեալ իբր ի Քարչևաքւոյ յանուն նորա, որով ինդրէլ յինէն տասն արծաթ. ես տեսեալ և ընթերցեալ զնամակն և ստուգեալ զձեռագիրն որ ծանօթ էր ինձ՝ ետու զարծաթն: Ընդ անցանել քանի աւուրց երկրորդ նամակաւ յանուն նորա՝ որպէս թէ ինդրեալ էր երեսուն կամ քսան (չգիտեմ հաւաստեաւ) արծաթիս, և ես ետու վերստին: Ի 5 կամ ի 6, օգոստոսի դարձեալ եկն իսմայէլցեանցն երրորդ նամակաւ Քարչևաքւոյ, յորում իբր թէ պահանջեալ էր այլ ևս յիսուն արծաթ տալ ի ձեռս նամակաբեր ձիաւորի, ի դառնալ նորա ի Ռոստովէ ի նոր Զէրքասը և առաքել, և ես յօժարեցայ. զի ոչ գոյր առիթ կասկածանաց և ոչ մի. ոչ ի Քարչևաքւոյ, որ էր այր նախարարական, անաշառ և անխարդախ, որոյ այնն այնէ, և ոչն ոչ: Եւ ոչ յիսմայէլցեանէն, որոյ որպէս ինքն, նոյնպէս և ծնողք և քորք և փեսայք էին բարերարեալ յինէն ազգի ազգի բարերարութեամբ, ի նեղութեան և յանձկութեան իւրեանց, և որ-յօրէ մտից իւրոց ի ծուխ իմ, երևէր ինձ պարկեցաւ և համեստ որպէս նորահարս և կարեկից ինձ համակ երիտասարդական խանդիւք:

Ընդ երեկոս եօթանց կամ ութից օգոստոսի, եկն իսմայէլցեանցն, ասաց թէ յայսմ երեկոյի ի մտանել արևու, ունի նամակաբեր ձիաւորն անցանել մերձ մերոյ գերեզմանատան՝ որկցորդ է քաղաքին. երթիցուք հանդիպեսցուք նմա, և տացեսի ձեռս նորա զիսուն ոուրլի արծաթոյն: Ես գնացի, նամակաբեր ձիաւորն չեկն, բայց փոխանակ նորա կայր անդ Թէվզեանն, զորմէ լուեալ էի թէ ենթարկեալ բանտարգելութեան ի պատճառս գնդակահար խոցելոյ զՍտամպոլցի Յովհաննէսն ի հրացանէ՝ գիշերայն ընդ պատուհանն, աջակցութեամբ խոստովանահօր իւրոյ Տէր Գաբրիէլի Տէր Սիմօնեան, և կարեվէր ջախիշելոյ զծնօտ նորա, մինչդեռ ես կայի ի Տփիսիս: Թէվզեանն ասաց, նամակաբեր ձիաւորն ապաստան է արարեալ վաղորդայնի զգալուստ իւր. և դարձաք ձեռնունայն ի տունս մեր: Ես-

շիմացայ թէ՝ Թէվզեանն՝ յայսմ աւուր սիայն է արձակեալ առ ժամանակ ի բանտէ՝ հրամանաւ Խալիբեանի, զի ի գլուխ բերցէ զդարանն, ուր հանդերձեալ էին որսալ զիս, խոստացեալ իսպառ ազատել զնա ի բանտարկութենէ, եթէ յաջողեսցէ արկածել զիս ի վտանգ:

«Ի տասն օգոստոսի ընդ երեկս յետ մտիցն արևու, իսմայէլցեանն (յերկուշաբթի պահոց վերափոխման) եկն և ասաց՝ թէ յայսմ երեկոյի գալոց է նամակաբեր ձիաւորն. երթիցուք մինչ ի ծայր քաղաքին և տեսցուք զնա ի վերայ ճանապարհին, և տացես նմա զիսուն ըուրլին, և տեղեկացիս թէ Բըր ունի գալ Քարչնաքին ի Ռոստով, անդ ունի գալ և Թէվզեանն. և ես պարզամտութեամբ գնացի. տեսաք ի հեռուստ զի շրջէր անդ Թէվզեանն, և չորս ձիաւորք մերձ ճանապարհին նստեալ կան ի դալարւոջ:

«Յառաջ մատեաւ մին և ասաց թէ ես եմ նամակաբերն, և սոքա ուղեկիցք իմ են: Ի տան իմ ի ձեռս նորա զդրամաթուղթն և ի հարցուփորձ առնելն զՔարչնաքւոյ, միւս ոմն մերձեցաւ, բուռն ենար զօձեացս, և որոտաձայն աղաղակեաց. խարախուրլ: Եւ ի քթթել ական ելին ի դարանէ Խալիբեանն. դատաւորք Մագիստրաթի՝ Մասլինեան և Թրասիլինիցեան ընիկ սրիկայքն Խալիբեանի. սպայն ժանդարմից բարօն Քլէիսթ, Յոհաննան Զուպարեան՝ փեսայն Խալիֆախչի Գէորգի՝ հօրեղբօր Շարօնիքեան Աստուածատուր քահանայի, և Յակոբ Զախրեան՝ փեսայն Աստուածատուր քահանայի և քեռայր Տէր Եղիայի Շաբոշնիքեանց և իմ խոստովանորդի. (զերկուս վերջինս ես էի պատահած.) կալան զիս և ասացին. զու վարձէիր զսրիկայս սպանանել զԽալիբեանն. և առաքեալ կոչեցին զՏէր Մարտիրոսն և զՏէր Պողոսն Խոճեան, որ զօղեալ կային ի մերձակայս (ընդ որ գոյր հեռագոյն և Տէր Ղուկասն,) և սկսան հաստատել ի վերայ իմ, թէ զու կաշառաբեկ առնէիր զծպտեալ ժանդարմին որպէս զսրիկայս՝ խողխողել զԽալիբեանն և ժանդարմք ես կրկնեցին որպէս ուսան, կամ որպէս ուսեալ էին. և ոչ ունկն եղեալ բանից իմոց՝ առօք փառօք տարան զիս ի դատաստան Մագիստրաթի, ուր ի էս գիշերի ատեան բացին նախագահութեամբ Խաթրանեանի՝ խոստովանորդւոյ Տէր Պողոսի Խոճեան, և ատենապպրութեամբ Սեմենովի, որ վարէր և զպաշտօն օրինապահի (սթրանափչի) և էր փեսայ Սեմենթովպաքւոյ՝ քարտուղարի Քաղաքապեաին Թագանըոգ քաղաքի, որում զայս բազմարդին պաշտօն տուեալ էր Խալիբեանն. հարցուփորձ արարին, և ես թէպէտ և պատմեցի զամենայն՝ որպէս եղեալ էր,

բայց նոքա գրեցին որպէս կամեցան, բազում ինչ յաւելեալ ի բանս իմ և բազում ինչ յապաւեալ և այսպէս արկին ի բանտ արդէն քանի աւուրբ ինչ յառաջ պատրաստեալ, ի 1853 յօ-գոստոսի 10, ի լոյս 11:

«Ի նմին գիշերի դատաւորքն Մասլինեան և Քրասիլնի-քեանն՝ առեալ ընդ իւրեանս և զքահանայ մի զվերոյիշետ Տէր Թուման Գանձապետեան, որ էր խոստովանահայր գերդաստա-նին Խալիբեան, գնացեալ են ի տուն իմ և վերիվայր արարեալ զամենայն ինչ, կամելով գտանել զգրամանենգ, որ յայնմ միջո-ցի՝ իբր եօթն ամօք յառաջ սկսեալ էր ընդ ծայրագոյն պաշտ-պանութեամբ Խալիբեանի և Խաթրանեանի ճոխացուցանել զնո-սա և զհամախոնի նոցա և զամենայն կուսակիցս նոցա, որք էին նահապետք ամենայն սխրափործութեանց նախիջնանայ, և գը-տեալ ոչինչ միայն զորորմելի գերդաստան իմ, զկինն իմ հի-ւանդուտ, և զերկուս դստերս որբացեալս ի տիս դեռաւուրց պա-տանեկութեան ի լերդակողմ խոցեալ աւետեօք նորահրաշ բան-տարկութեան իմոյ խորասոյզ ընկղմեալ ի ծով անմիխթար սգոյ:

«Յետ իբր տասն աւուրց եհաս և ի քաղաքապետէն Թա-գանրոգի հրաման բանտարկել զիս, մինչև ի տասն աւուրց հե-տէ կոշկոնէի ի բանտի: Հրամանն այն, յապաղեալ էր վասն այն, զի չև ևս էր Խալիբեանն գնացեալ ի Թագանրոգ քաղաք և սպայն ժանդարմից բարօն Քլէսսթ՝ ոչ երևէր ի սիջի-և ի բանտի՝ ի մէջ բանտարկելոց յածէր շնչիւն գաղտնածածուկ յոյժ, որում ես չէի ծեռնհաս լինելի խելամուտ. ասէին, թէ Սե-մենթովսքին կոշեալ է զիեսայն իւր զՍեմենովն ի Թագանրոգ և թէ Սեմենովն տրտում է յոյժ. և յետ սակաւուց լսելի եղե թէ Սեմենթովսքին չև էր ստացեալ զիւր բաժինն ի Խալիբեա-նէ, վասն որոյ և յապաղէր հրամանն, այլ յորժամգնաց Խալի-բեանն ի Թագանրոգ և եղե իրաւախոն, նա զստանալիմն ստա-ցաւ և հրամանն գրեցաւ:

«Քաղաքապետն Թագանրոգի էր իշխանն (քնեազ) Լիվէն՝ փեսայ երևելոյն Բութքովի և յընթացս այսոցիկ տասն աւուրց ոչ թողին զոք ի գերդաստանէ իմմէ տեսանել զիս և ոչ ոք ի դատաւորաց եկն յայցելութիւն. առաջին նուագէր ելանելոյ իմ ի ծմակային սենեկէ առանձնութեան և շնչել զօդ, յորժամ տա-րան զիս յատեան ընթեռնուլ ինձ զհրաման Քաղաքապետին Թագանրոգի:

Կամեցայ խօսել ինչ, և յանկարծ մի առ մի բժին դատաւորք զատեանն և անհետ եղեն, և բանտապետն դարձոյց զիս վերստին ի սենեակ բանտին:

«Ի բազում ժամանակս չետուն ինձ գրիչ և թուղթ գրել

բողոք կամ առ նախարարն և կամ առ Արքայն, բայց ես գտի զմատիս և պատառ մի թղթոյ, և գրեցի ի բերանոյ կողջան նամակ բողոքական առ Կաթողիկոսն Ներսէս, Աղքընտիր և Աղքասէր Հայրապետն Հայոց, որ յանու ժամանակի մոռացեալ էր դուդն ինչ զրան Ցիսուսի թէ՝ բարի արարէք և ատելեաց ձերոց, երևի ոչ կամելով կայծակոնս հրոյ կուտել ի գլուխ իմ, և տօնէր զյաղթանակ իւր զարգասիս երեսուն և եօթն ամեայ անխոնջ ճշնութեանց, հրճուեալ յաւետարեր նամակաց Խալիքեանի և Զալալեանի, ընկալեալ զայն նամակ պարզագրեալ ձեռամք գստերն իմոյ Վառվառեալ. հրամայեալ էր կարգել նոր ատեան քննութեան և յերեան հանել գիեղինակ նամակին, յորում որպէս ի հայելոյ տեսանէր զանձն և զմնծագործութիւնս իւր. և ոչ դադարեցաւ Աստուածարեալն Ներսէս՝ մինչև յատենի բննութեան ոչխոստովանեցաւ զուտորն իմ՝ թէ ես ինքն եմ շարադրողն և պարզագրողն՝ Այսպիսի բոնաւորական սկզբմամբք ահ և սարսափ արկեալ զամենեքումբք. որբ և իւիք կամէին օգնել ինձ ի նեղութեան իմում, բռնադատէին զի մինչ թշնամիք իմ նախատէին զիս, նզովեսցեն զիս այնոքիկ՝ որք երբեմն գովիչք իմ էին:

«Եետ քանի աւուրց սկսան ընդերկար մերժել զաղաչանս իմ տալ ինձ միջոց բողոքելոյ ընդ պատրուակաւ՝ թէ Քաղաքագետն Լիվէն հանդերձեալ է ելանել ի պաշտօնէ՝ և ոչ ընդունի զթուղթ ինչ. և ապա յետ օանի աւուրց ի բարձրացուցանել զաղաղակ իմ, թոյլ ետուն գրել առ նոր Քաղաքապետն կոմս Աղէրբէրգ, ես կամէի գրել աղաչանս առ իշխանն Լիվէն՝ որ ճանաչէր զիս, և ի չուելն մեր ի Տաւրիկ, էաք ի միասին ընդ նմա ի շոգենաւի և յաւուր միում, մինչ իշխանն այն Լիվէն նստեալ ի ճաշի ի տան Խալիքեանի զուարճանայր, յառաջարկել ուրուք ըմպել զբաժակ վասն երկարութեան Վորոնցով կոմսի և նորին ինքեան Լիվէն իշխանի, քաղաքապետն յոտն կացեալ ասացեալ է, թէ ձեզ չէ պիտոյ ըմպել զբաժակ կենաց ոչ վասն իմ և. ոչ վասն Վորոնցով կոմսի, այլ արբցուք ամենեքին վասն կենաց Տէր Գաբրիէլի Պատկանեան, զի զոր ինչ ունիք արդ, ունիք ի շորհաց նորա, և արբեալ է. և ամենենցուն արբուցեալ. և յետ այնորիկ ասացեալ է. ձեզ պարտ էր ունել Առաջնորդ ոչ զՄատթէոս, այլ զէր Գաբրիէլն Պատկանեան, ընդորում աւուրս երկուս անցուցաք ի շոգենաւի: Զայս ամենայն ի միւսում առաւօտու՝ լորժամ հրաւիրեալ ի նմանէ զնացի ի տուն Խալիքեանի՝ ինքն Լիվէն և Խալիքեանն և այլ սեղանակիցք պատուեցին, և յոյժ ստրջացան՝ զի ոչ եկի

յայնմ գիշերի ի կոչ նոցա ի պատճառս պատարագի, զոր ունէի
ի միւսում առաւօտու մատուցանել: Այլ թուղթք իմ, զորս թոյլ
ևտուն ինձ ընդ ժամանակս ժամանակս զրել, մինչ զկնի երեք
ամեայ բանտարկութեանս ցուցին ինձ ի նահանգական դատա-
րանի զգործն ամենայն ոչ երևցան ի մէջ այլոց թղթոց, բաց
յումանց որք չէին կարևոր ինչ:

Այսքանս բաւական համարելով սպանութեան խնդրոյն
ինչպէս ծագում առնելոյն և Տ. Գարրիէլ Պատկանեանի դատա-
ճանեալ դատապարտութեան վերայ, կը թողումիւր բանտարկու-
թինէ վեց ամիսներ յետոյ ոռւս աղախինի մի ըրած յայտնու-
թիւններն բանտապետին, երբ ինքն ևս բանտարկուելէ, ու-
րիշ պատճառաւ, թէ ինքը անուանի տիկնոջ մի տան մէջ սպա-
սաւոր գտնուած ատէն, ինչպէս Խալիբեան և այլ պաշտօնեայք
այդ ափկնոջ տան մէջ թղթախաղութեան պատրուակաւ ժո-
ղովուելով սակարկութիւն արած են դաւադրութեան և դատա-
պարտութեան Տ. Գարրիէլի, թէ ինչպէս բանտապետն կրկնել
տուել է սպասուեհի աղջկան խոստովանութիւնը մի քանի վկա-
ների և Տ. Գարրիէլի առջև, և թէ ինչպէս Տ. Գարրիէլ բողո-
քագրով կը յայտնէ այդ եղելութիւնն և անլսելի կը մնայ:

Զանց առնելով նաև Տ. Գարրիէլ Պատկանեանի թշնամի
հանդիսացած քանանաների կրած զանազան կերպով փորձանք-
ներն յընթացս բանտարկութեան նորին, և կրած չարիբներն
իրեւ փոխարինութիւն իրենց անխիղճ վարմանց ընդգէմ Տ.
Գարրիէլի, նկատողութեան արժանի կը համարիմ այն կէտը,
թէ Տ. Պ. Պատկանեան իւր դաւադիրներէն բռնուած օրը, կամ
յետոյ, ոչ Մագիստրաթի մէջ և ուրիշ ատեանի մէջ ընաւ և
երբէք մեղայ չէ ասած Խալիբեանին, և կամ նորա ոտքերուն
խոնարհելով երբէք ներողութիւն և գիտութիւն չէ աղերած, և
զինքն յանցաւոր չէ խոստովանած, ինչպէս իմացած է եղել պ.
Ե. Շահազիզեան, թերևս Մագիսթրաթի արձանագրութիւննե-
րից քաղելով, որ զօրեղագոյն քաղաքագլուխ Խալիբեանի ազ-
գեցութեան և հրամանին ներքէ մի պաշտօնատուն էր, և որոյ
դատաւորը և պաշտօնեայք կամակատար ծառաներն եղած էին
Խալիբեանի, ոմանք առ ահի և ոմանք շահախնդրութեամբ: Իսկ
դոցա հետ կցորդ և կամակից գոնուած քահանաների մասին
Տ. Գարրիէլի զրածներն վերջին աստիճան զզուանք և նողկանք
կը պատճառէր ընթերցողին, այնքան չարանախանձ և նենգա-
ւոր անբարոյականութեամք լցուած լինելով:

Ցետ երկար տառապանաց Պատկանեանցի աղատութեան
և վերստին քահանայադործութեան իրաւունք ստանալու մա-

սին պ. Կարակաշն լոել է եղել (չեմ գիտեր ինչնու)՝ զոր պէտք էր յանրամատն հրատարակէր, որովհետև այդ պարագայն է որ Տ. Գաբրիէլի արդարացումն երևան կը հանէ, և տրուած վճիռն սխալ մեկնութեամբ դատապարտութեան անիրաւութիւնն ի յայտ կը բերէ, վասն զի մարդասպանութեան խորհուրդն ունեցող և գործադրութեան աշխատող մի քահանայ պէտք էր ցյաւիտեանս լուծեալ և դատապարտեալ մնայր պետական օրինօք, որպէս և եկեղեցական կանոնիւթիւն Ես կը ցանկայի՝ որ պ. Տ. Շահազիկ՝ իւր ձեռքն ընկած հանգուցեալ Պատկանեանի այս նիւթի վերայ զրած մի շատ շահեկան նամակն հրատարակութեան տար, որ անշուշտ, ինչպէս ինքն էլ կասէ, կատարելապէս լոյս պիտի սփոք այդ նիւթի վրայ:

Այն ատեն և այն պատեհութեամբ միայն, ես ևս իբրև յետին գերակատար այդ խնդրոյ մէջ բաղդատութեան զնելով իմ գիտցածներս Պատկանեան Հօր ինքնածեռագիր բազմաթիւ և բազմապատում նամակների հետ, վկայ պիտի հանդիսանամ իսկութեանը, թերևս առաւել պարզելով այն անծանօթ մնացած պարագաներն, որով ի գլուխ ելաւ այդ արդարացումն և շնորհիւն Աստուծոյ վերստին պատիւ և արտօնութիւն ստացաւ այդ պատուական գիտուն մարդն, հայրենախօս բանաստեղծն, Աստուածաբան վարժապետն և քահանայագործութեամբ ի գերեզման իջաւ խաղաղ և հանդարտ սրաիւ, ի պարծանս իւր Զաւակաց և հնամենի գերդաստանին, որոյ բազում անդամներն ի վաղուց անտի ծառայած են Հայաստանեաց ո. Եկեղեցւոյ, և Աղգի յոյժ գնահատելի գրական վաստակօք:

Ի վերջ բանիս, շնորհակալութիւն կը մատուցանեմ գրասէր և բանասէր պ. Ե. Շահազիկի, իմ ի Տէր հանգուցեալ Հայրապատիւ բարեկամին Տ. Գաբրիէլ ա. Քահանայ Պատկանեանի վերայ տուած տեղեկութեանց համար, որով և ինձ առիթ ընծայեց մի քանի բացատրութիւններ տալու Բայց միւս կողմանէ չեմ կարող առանց ցաւ յայտնելու անցնիլ յարգոյ բանասիրին իրեւ ծանօթութիւն գրած սա տողերուն թէ՝ «Մեկ չափազանց զարմացնում է մեր՝ Հոգեւոր բարձր իշխանութեան Շներկայացուցիչների գործողութիւններն այդ գործում... Մենք ոչենք հասկանուա, թէ ի՞նչ շահ ունեցանք մենք, որ Պատկանեանցը վերստացաւ իւր քահանայութիւնը, կամ ի՞նչ վնաս էկար, որ նա մնար աշխարհական։ Այս պարբերութիւնը մեղ չափազանց զարմանք է պատճառում, որ ժամանակակից անձանց և իրաց պատմութեան անխոնջ հետազօտիչ պ. Ե. Շահազիկի գրչէն կելնէ այսպիսի ոչ մարդասիրական խօսք։

Այն զարմանք եմք յայտնում, թէ պ. Շահազիզ մյուշափ անարգ մի անձնաւորութիւն է կարծում զՊատկանեան, որ ի տղայ տից՝ 70 ասրի շարունակաբար գրիչ շարժած և հայ գրականութեան պարծանքներէ մին եղած է. արդեօք նորա տպեալ և անտիպ այնքան հեղինակութիւններն անարժէք և անպիտան երեցած են իրենց որոց ցանկը միայն սքանչացում կը պատճառէ նորա բազմաշխատ կեանքին վերայ, որ նոյն իսկ իւր տառապեալ, կողկոնեալ և կալանաւորեալ վիճակին մէջ՝ իւր բեղմնաւոր մտքի կորովը պահած, և արտադրած է այնչափ գրութիւններ. Պիտի ինդրէի՝ որ պ. Ե. Շահազիզ միանգամ աչքէ անցունէր այդ ցանկը՝ զոր մեծ պ. Գրիգոր Խալաթեանց պրօֆէսորը հրատարակեց 1902 թուին ս. էջմիածնի Արարատ ամսագրի մէջ, իրեւ 274-281. Ու՞ր թողումք և բազմաթիւ և բազմաթերթ նամակագրութիւնքն, որը շատ կարևոր և շահեկան նիւթեր կը պարունակեն Ազգային պատմութեան վերաբերեալ։

Այսպիսի գրական և գիտական հանճարով օժտեալ մի քահանայի ազատութեան համար մեր Հոգեոր իշխանութեան բարձր կամ ստորադաս եկեղեցականների կողմանէ եղած աշխատութիւններն, Աւետարանական սիրոյ, մարդասիրութեան և եղբայրսիրութեան, արգասիքն էին. Երիքովի ճանապարհին վերայ ինկած վիրաւորեալ, հարուածեալ և կողկոնեալ սամարացոյն վրայ գթալ, և նորա ցաւազին աղաղակներուն լսելով բառնալ և տանել ի պանդոկ (Ղուկ. Ժ. 30). Այսպէս արարին և այն Հոգմորականք այդ վիրաւորեալ, անկեալ և դատապարտեալ. Քահանայի համար, ակներև տեսնելով իրենցմէ յառաջ եկած, անցած Ղետացիններուն անգիտութիւնն ու անտարբերութիւնն և արհամարիհանքն ամենաթշուառ անկելոյն վրայ։

Արդեօք ի՞նչ պիտի ասէր պ. Ե. Շահազիզ, եթէ ինքն զաւակ լինէր այդ անարգեալ քահանային, ե կամ իւր հայրը լինէր այդպէս իզուր դատապարտեալ անձն, ոչ ապաքէն պիտի ջանայր որ ազատէր զայն՝ և անձնական և ընտանեկան պատիւր վերականգնէր։

Այո, պարոն Շահազիզ, կարծէր գործն այդ շնորհին արժանանալու համար գործ դրուած մեծ աշխատանքին, վասն զի այս կը պահանջէ մարդկային պարտաւորութեան օրէնքը, և այս է մեծ պատուիրանն Աստուածամարդոյն (Մատթ. է. 12) որում անտարակոյս հպատակ կայք և դուք, որպէս և նուաստու